# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ընդառաջելով Ամերիկահայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանին, Ամերիկահայոց Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպս. Պարսամյանին, Կանադայի Հայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանին, Ավստրալիայի և Նոր Զելանդիայի Հայոց թեմի առաջնորդ Տ. Աղան արքեպս. Պալիոզյանին, Գերմանիայի Հայոց թեմի առաջնորդ Տ. Գարեգին արքեպս. Բեքչյանին, Իրաքի Հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ արքեպս. Ասատուրյանին, ինչպես նաև Ուկրաինայի Հայոց թեմի առաջնորդ Տ. Նաթան եպսկ. Հովհաննիսյանին և բարձր գնահատելով հայ ազգի նվիրյալ զավակաց անձնվեր ծառայասիրությունը, Հայրենիքի ու Հայաստանյայց Եկեղեցու հանդեպ դրսևորած անմնացորդ սերը, թեմական կյանքում ցուցաբերած անխոնջ աշխատանքը, շինարարական և վերանորոգչական բնագավառներում կատարած բազմամյա և բազմօգուտ սպասավորությունը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական գնահատության է արժանացրել եկեղեցական, ազգային և համայնքային կյանքում իրենց գործուն մասնակցությունն ու աջակցությունը բերած հետևյալ անձանց.

### «ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ»

շքանշանով պարգևատրվել է.

1. Տիար Անդրե Նազարյանը (Կանադա)

### «Ս. ՍԱՀԱԿ-Ս. ՄԵՍՐՈՊ»

շքանշանով պարգևատրվել են.

1. Տիար Սուրեն Ասատրյանը (Ուկրաինա)
2. Տիար Եվգենի Վիրվիչը (Ուկրաինա)

### «Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ»

շքանշանով պարգևատրվել են.

1. Բարեշնորհ սարկավագ Ստեփան Կյուզյումյանը (ԱՄՆ)
2. Տիար Մկրտիչ Մենգիլյանը (ԱՄՆ)
3. Տիար Րաֆ Ղազարյանը (ԱՄՆ)
4. Տիար Դիք Նիգսարյանը (ԱՄՆ)

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳՐԻ ԵՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ.

1. Արժանաշնորհ Տ. Առնակ ավագ քահանա Գասպարյանը (ԱՄՆ)
2. Արժանաշնորհ Տ. Կարեն ավագ քահանա Կտանյանը (ԱՄՆ)
3. Արժանաշնորհ Տ. Արտեն ավագ քահանա Աշճյանը (ԱՄՆ)
4. Արժանաշնորհ Տ. Շահե ավագ քահանա Սեմերճյանը (ԱՄՆ)
5. Տիար Հրայր Հովնանյանը (ԱՄՆ)
6. Տիար Հովհաննես (Ջոն) Նահապետյանը (Ավստրալիա)
7. Տիար Համո Պետրոսյանը (Գերմանիա)
8. Տիարք Հարություն և Օնիկ Քյուփելյան եղբայրները (Գերմանիա)
9. Տիար Գաբրիել Արթինյանը (Գերմանիա)

## ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ԼԱՆՋԱԽԱՉ

կրելու իրավունքի և պատվի է արժանացել.

1. Արժանապատիվ Տ. Մեսրոպ քահանա Գաբրիելյանը (Իրաք)